# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Հայկազունք-Ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/3 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 3 | Խնձոր, Apple, Яблоко | Մենք, Սիս | Սիս, Եվրոթերմ ՓԲԸ | "Պատրաստի օգտագործման բնական հյութ, տեղական արտադրության: Խնձորի հյութ, որը պատրաստվում է թարմ խնձորի պտուղներից : Խնձորի հյութը պատրաստում են պարզեցված, չպարզեցված կամ պտղամսով: Արտաքին տեսքը. – պարզեցված հյութի` թափանցիկ հեղուկի պահման ամբողջ ընթացքում, թույլատրվում է թեթև կոպալեսցենտում, թույլատրվում է նստվածքի առկայություն` ոչ ավել, քան 0,2 %–ից - Չպարզեցված հյութի` բնական պղտոր հեղուկ (թափանցիկությունը պարտադիր չէ), թույլատրվում է տարայի հատակին նստվածքի առկայություն` ոչ ավելի 0,8 % - պտղամսով հյութի` համասեռ հեղուկ, հավասարաչափ տարածքված խնձորի պտղամսի մասնիկների առկայությամբ, թույլատրվում է տարայի հատակին աննշան նստվածքի առկայություն և |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | թեթևակի շերտատում: - գույնը՝ լավ արտահայտված բաց կանաչ կամ դարչնագույն՝ կախված խնձորի գույնից: Խնձորի ուղղակի մզման հյութում լուծվող չոր նյութերի զանգվածային մասը պետք է լինի ոչ պակաս 10 %–ից, իսկ վերականգնված հյութում՝ պակաս 11,5% –ից: Խնձորի հյութում էթիլ սպիրտի պարունակությունը՝ չպետք է գերազանցի 0,2 %-ը, իսկ օքսիմեթիլ ֆուրֆուրոլի զանգվածային մասը պետք է լինի ոչ ավելի 20 մ/գր/դմ3-ից: Խնձորի հյութում չի թույլատրվում հանքային, բուսական կամ կողմնակի խառնուկների առկայությունը: Փաթեթավորումը՝ ապակե կամ համակցված պոլիմերային ստվարաթղթե սպառողական տարրաներով: Քաշը 1 լիտր,ԳՕՍՏ 32104-2013 : Անվտանգությունը, փաթեթավորումը, մակնշումը և նույնականացումը՝ համաձայն Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ N 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 882 որոշմամբ հաստատված «Մրգերից և բանջարեղեններից ստացված հյութամթերքի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 023/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ N 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Մատակարարումն իրականացվում է առնվազն շաբաթական մեկ անգամ: Մատակարարման կոնկրետ օրը որոշվում է Գնորդի կողմից նախնական (ոչ շուտ քան 3 աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով` էլ. փոստով կամ հեռախոսակապով: Մատակարարումը կատարվում է մատակարարի միջոցների հաշվին` համապատասխան մանկապարտեզներ նշված հասցեներով, *ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի «Սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագրի տրամադրման կարգը և սանիտարական անձնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 85-Ն հրամանով հաստատված սննդամթերքի տեղափոխման համար նախատեսված տրանսպորտային միջոցներով: *Նշված որոշմամբ սահմանված սննդատեսակների համար: Յուրաքանչյուր ապրանքատեսակի նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից, հաշվի առնելով տարվա ընթացքում մանկապարտեզ հաճախող երեխաների փաստացի թվաքանակը և ֆինանսավորումը կիրականացվի փաստացի մատակարարված ապրանքի մասով: " |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО АЙКАЗУНК в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/3 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 3 | | | | |